*Հաստատված է*
*Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2019 թվականի օգոստոսի 29 -ի*
*թիվ 10 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

*Approved by*
*the Scientific Council of*
*the European University*
*At the session N 10, 2019*
*August 29, 2019*
*Rector: H. Bisharyan*

________________________
*(Signature, K.T.)*

________________________
(Ստորագրություն, Signature)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Եվրոպական Համալսարանի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԵՀ ՈՒԽ) ուսանողական և երիտասարդական խնդիրներով ու հարցերով զբաղվող, շահույթ չհետապնդող բուհին կից գործող ուսանողական կառույց է:

1.2. ԵՀ ՈՒԽ գործում է իր կանոնադրության, ԵՀ կանոնադրության, ՀՀ Սահմանադրության, ՀՀ Օրենսդրության և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3. ԵՀ ՈՒԽ իր լիազորությունների շրջանակներում և գործունեության նպատակներին համապատասխան կարող է իրականացնել ուսումնագիտական, ուսումնադաստիարակչական, մշակութային և հասարակական գործունեություն:

1.4. ԵՀ ՈՒԽ իր գործունեության ընթացքում չի կարող ծավալել կուսակցական կամ քաղաքական գործունեություն:

1.5. ԵՀ ՈՒԽ իր գործունեությունն իրականացնում է օրինականության, կամավորության, իրավահավասարության և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա:

1.6. ԵՀ ՈՒԽ անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ «Եվրոպական

# CHARTER ON STUDENT COUNCIL OF EUROPEAN UNIVERSITY

## GENERAL PROVISIONS

1.1 The Student Council of the European University (hereinafter - the EU SC) is a non-profit university-affiliated student association dealing with student and youth issues and issues.

1.2 The EU SC operates in accordance with its charter, the EU Charter, the RA Constitution, the RA Legislation and other legal acts.

1.3Within the framework of its powers and in accordance with the objectives of the activity, the EU SC can carry out academic, educational, cultural and social activities.

1.4 The EU SC may not engage in party or political activities during its activity.

1.4 The EU SC carries out its activities on the basis of the principles of legality, voluntariness, equality and democracy.

The name of the EU SC is:

- Full Armenian: "Student Council of the

համալսարանի ուսանողական խորհուրդ»
կրճատ՝ «ԵՀ ՈՒԽ»,
- ռուսերեն լրիվ «Студенческий Совет Европейского Университета»,
կրճատ՝ «СС ЕУ»,
- անգլերեն լրիվ՝ «Students Council of European University»,
կրճատ «SCEU»:

European University"
abbreviated: "EU SC",
• full Russian «Студенческий Совет Европейского Университета»,
abbreviated: «СС ЕУ»,
• full English: "Students Council of European University",
abbreviated "SCEU".

## 2. ԵՀ ՈՒԽ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## GOALS AND OBJECTIVES OF THE EU SC

2.1. ԵՀ ՈՒԽ նպատակներն են.
ա) ուսանողական շահերի և իրավուքների պաշտպանությունը, ուսանողության տեսակետի ներկայացումը բուհական և արտաբուհական ասպարեզում,
բ) ուսումնակրթական և գիտական ոլորտում աշխատանքների ծավալումը,
գ) ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
դ) ուսանողներին տեղեկատվությամբ ապահովումը,
ե) բազմաբնույթ միջոցառումների իրականացումը,
զ) ուսանողների ազատ ժամանցի կազմակերպումը:

The goals of the EU SC are:
a) protection of student interests and rights, presentation of the student's point of view in the university and non-university arena,
b) development of works in the educational and scientific sphere,
c) military-patriotic education,
d) providing students with information,
e) implementation of multidisciplinary measures,
f) organization of students' free entertainment.

2.2. ԵՀ ՈՒԽ խնդիրներն են.
- ապահովել ԵՀ–ում ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը, հետևել ուսանողության իրավունքների ու շահերի պաշտպանությանը,
- ԵՀ ղեկավար մարմիններին ներկայացնել ուսանողության խնդիրները, բողոքներն ու առաջարկները,
- մասնակցել ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը,
- նպաստել ուսանողության

The objectives of the EU SC are:
• ensure the expansion and development of student autonomy processes in EU, follow the protection of student rights and interests,
• To present the students' problems, complaints and suggestions to the governing bodies of the EU.
• participate in the organization of educational processes, educational activities, student scientific activities,
• to contribute to the creative, intellectual, cultural and spiritual development of students, the organization of students' daily life, rest and leisure,
• establish connections and practical relationships with RA and foreign student, youth, educational, cultural and other

ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակութային ու հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի, հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը,

- հաստատել կապեր ու գործնական փոխհարաբերություններ ՀՀ և արտերկրյա ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ,
- հնարավորության դեպքում, իրականացնել սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր,
- մշակել և ԵՀ–ի ղեկավար մարմիններին ներկայացնել ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող նախագծեր և նպաստել դրանց ընդունմանն ու իրականացմանը,
- աջակցել և մասնակցել բուհի գործունեությանն ու ուսումնական ծրագրերի բարեփոխումներին,
- նպաստել ուսանողության մեջ ազգային, հայրենասիրական արժեքների և ավանդույթների ձևավորմանն ու պահպանմանը,
- համագործակցել այլ բուհերի ՈՒԽ-ների, միջազգային ուսանողական, երիտասարդական, հասարակական կառույցների հետ,
- լուսաբանել ՈՒԽ-ի գիտական, մշակութային և մարզական միջոցառումները,
- ստեղծել տարաբնույթ ուսանողական աշխատանքային ջոկատներ, կամավորական և բարեգործական ակումբներ,
- մշակել և իրագործել ուսանողների սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր,
- միջոցներ ձեռնարկել բուհի սովորողների հանգիստն ու ազատ ժամանցը կազմակերպելու համար,
- նպաստել և ապահովել բուհի ուսանողների մասնակցությունը ԵՀ գիտխորհրդում, ֆակուլտետների

organizations,

- if possible, implement social and charitable programs,
- develop and present projects related to student life and educational processes to the governing bodies of the EU and promote their adoption and implementation,
- support and participate in university activities and curriculum reforms,
- contribute to the formation and preservation of national, patriotic values and traditions among students,
- to cooperate with other universities' SCs, international student, youth, public structures,
- to cover scientific, cultural and sports events of SC,
- create various student work groups, volunteer and charity clubs,
- develop and implement programs aimed at solving students' social problems,
- take measures to organize the rest and free entertainment of university students,
- promote and ensure the participation of university students in the EU scientific council, faculty councils, other university structures,
- to protect the rights of students at the university,
- contribute to the developing of ties between the Homeland-Diaspora, as well as students from abroad and the organization of joint events with them,
- to organize seminars, exhibitions, competitions, consultations, concerts, sports events, meetings with figures of science, culture, social and political spheres.

խորհուրդներում, բուհական այլ կառույցներում,
- պաշտպանել բուհում ուսանողների իրավունքները,
- նպաստել Հայրենիք-Սփյուռք, ինչպես նաև արտերկրի ուսանողների միջև կապերի ամրապնդմանը և նրանց հետ համատեղ միջոցառումների կազմակերպմանը,
- կազմակերպել սեմինարներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, խորհրդակցություններ, համերգներ, սպորտային միջոցառումներ, հանդիպումներ գիտության, մշակույթի, հասարակական և քաղաքական ոլորտների գործիչների հետ:

## 3. ԵՀ ՈՒԽ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆՐԸ

3.1. Սահմանված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար ԵՀ ՈՒԽ իրավասու է.
ա) որոշել իր կառուցվածքը,
բ) իր կանոնադրության և ՀՀ օրենսդրության համաձայն կազմակերպել և մշակել տարեկան ծրագրեր,
գ) իր գործունեության շրջանակներում իրականացնել հրատարակչական (այդ թվում՝ էլեկտրոնային) գործունեություն,
դ) շնորհել ԵՀ ՈՒԽ պատվավոր նախագահի, պատվավոր անդամի կոչումներ,
ե) միջնորդել ուսանողների կրթաթոշակների նշանակման, սոցիալական օգնության, արտաուսումնական միջոցառումների պլանավորման գործընթացներին,
զ) կազմակերպել բարեգործական ակցիաներ, դրամահավաքներ բուհի սոցիալապես անապահով, կարիքավոր ու հաշմանդամ ուսանողներին օգնելու նպատակով,
է) իր առջև դրված խնդիրների լուծման համար, ՈւԽ կազմը համալրել նոր անդամներով:

3.2. ԵՀ ՈՒԽ պարտականություններն են.
ա) աջակցել բուհի տարածքում

## THE RIGHTS AND OBLIGATIONS OF THE EU SC

3.1. In order to achieve the set goals and solve the set problems, the EU SC is authorized to:
a) determine its structure,
b) to organize and develop annual programs in accordance with its charter and RA legislation,
c) to carry out publishing (including electronic) activities within the framework of its activities,
d) award titles of honorary chairperson of the EU SC, honorary member,
e) to mediate the processes of assigning student scholarships, social assistance, extracurricular activities planning,
f) to organize charity actions, fundraisers in order to help socially disadvantaged, needy and disabled students of the university,
g) to replenish the composition of the SC with new members to solve the problems before it.

The obligations of the EU SC are:
a) to support discipline and organization of

կարգապահությանը և կրթադաստիրակչական միջոցառումների կազմակերպմանը,
բ) պահպանել բուհի ուսանողների շահերը,
գ) աջակցել ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ համագործակցելով շահագրգիռ կազմակերպությունների և ԵՀ Կարիերայի կենտրոնի հետ,
դ) հարգել ՈՒԽ ցանկացած անդամի կարծիքը և կոլեգիալ կերպով մոտենալ հարցերի լուծմանը,
ե) սույն կանոնադրության համաձայն անցկացնել ՈՒԽ ղեկավար օղակների ընտրությունները և ներկայացնել հաշվետվություն ԵՀ ՈՒԽ ընդհանուր ժողովին, ԵՀ Գիտական խորհրդին,
զ) համագործակցել բուհի բոլոր ստորաբաժանումների հետ:

educational events in the university area,
b) protect the interests of university students,
c) support the employment of students by cooperating with interested organizations and the EU Career Center,
d) respect the opinion of any SC member and approach the resolution of issues in a collegial manner,
e) in accordance with this charter, to conduct the elections of the SC leadership and submit a report to the general meeting of the EU SC, the Scientific Council of the EU,
f) cooperate with all departments of the university.

## 4. ԵՀ ՈՒԽ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## THE RIGHTS AND OBLIGATIONS OF THE MEMBERS OF THE EU SC

4.1. ԵՀ ՈՒԽ անդամ կարող են դառնալ ԵՀ կրթության բոլոր աստիճանների սովորողները՝ բակալավր, մագիստրոս, ասպիրանտ, հայցորդ:

Students of all levels of EC education can become members of the EC SC: bachelor's, master's, PhD student, PhD applicant.

4.2. ՈՒԽ անդամ կարող է դառնալ բուհում սովորող յուրաքանչյուր անձ, որն այդ մասին գրավոր դիմում է ներկայացրել ՈՒԽ: ՈՒԽ անդամ դառնալու հարցը որոշում է ՈՒԽ նախագահությունը:

Any person studying at the university who has submitted a written application to the SC can become a member of the SC. The issue of becoming a member of the SC is decided by the SC presidency.

4.3. ՈՒԽ անդամներն իրավունք ունեն՝
ա) ընտրել, ընտրվել և առաջադրվել ՈՒԽ ղեկավար մարմիններում,
բ) մասնակցել ՈՒԽ կողմից անցկացվող միջոցառումներին, ժողովներին,
գ) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ՈՒԽ աշխատանքի վերաբերյալ
դ) հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով,
ե) դուրս գալ ՈՒԽ կազմից՝ նախագահությանը ներկայացնելով գրավոր դիմում:

SC members have the right to:
a) choose, be elected and be nominated in the governing bodies of the SC,
b) participate in events and meetings held by the SC,
c) to receive necessary information about the work of the SC
d) make suggestions and comments,
e) withdraw from the SC by submitting a written application to the presidency.

4.4. ՈՒԽ անդամները պարտավոր են՝
ա) օժանդակել ՈՒԽ հեղինակության

The members of the SC are obliged to:
a) to support the strengthening of the SC's

ամրապնդմանը, գործունեության ընդարձակմանն ու կատարելագործմանը,
բ) ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՈՒԽ-ի կողմից անցկացվող միջոցառումների, ծրագրերի մշակմանը և իրականացմանը,
գ) պահպանել սույն կանոնադրության պահանջները,
դ) կատարել ՈՒԽ ղեկավար մարմինների օրինական որոշումները,
ե) ստանձնել պարտականությունները,
զ) չկատարել գործողություններ, որոնք կարող են վնասել ՈՒԽ կամ նրա անդամների շահերը:

4.5. ՈՒԽ անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում՝
ա) ՈւԽ-ի նախագահության որոշմամբ՝ ժողովներից պարբերաբար բացակայելու պատճառով,
բ) ՈՒԽ-ի աշխատանքներից խուսափելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և ԵՀ ՈՒԽ կանոնադրությամբ սահմանված ՈՒԽ անդամի պարտականությունները չկատարելու դեպքում,
գ) ՈՒսումնառությունն ավարտելուց հետո, ուսանողական համակազմից ազատվելու դեպքում,
դ) Բուհից հեռացվելու դեպքում

4.6. ՈՒԽ անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը ընդունում է ՈՒԽ նախագահությունը:

authority, the expansion and improvement of its activities,
b) show active participation in the development and implementation of events, programs held by the SC,
c) comply with the requirements of this statute,
d) to fulfill the legal decisions of the SC management bodies,
e) assume duties,
f) not to perform actions that may harm the interests of the SC or its members.

The powers of SC members may be prematurely terminated in the following cases:
a) by the decision of the SC presidency, due to regular absence from the meetings,
b) In case of evasion of the work of the SC, non-fulfillment of decisions, disciplinary violations and non-fulfillment of the duties of a SC member defined by the EU SC charter,
c) After completing studies, in case of dismissal from the student body,
d) In case of dismissal from the university

4.6 The decision on the termination of the powers of the SC member is adopted by the SC presidency

## 5. ԵՀ ՈՒԽ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

5.1. ԵՀ ՈՒԽ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն են.
- ֆակուլտետային ուսանողական խորհուրդները (այսուհետ՝ ՖՈՒԽ),
- մշտական հանձնաժողովները

5.2. ՖՈՒԽ-ների աշխատանքը համակարգում է ԵՀ ՈՒԽ նախագահը, իսկ հանձնաժողովների

## THE GOVERNING BODIES AND STRUCTURAL SUBDIVISIONS OF THE EU SC

5.1 The structural divisions of the EU SC are:
- faculty student councils (hereinafter: FSC),
- standing committees

5.2 The work of the FSCs is coordinated by the chairperson of the EU SC, and the activities of the commissions by the vice-chairperson.

գործունեությունը՝ փոխնախագահը:

5.3. Ուսանողական խորհրդի ընդհանուր աշխատանքները ղեկավարում է ՈՒԽ նախագահը, ով այդ պաշտոնում ընտրվում է ԵՀ ՈՒԽ նախագահության կողմից:

5.4. ԵՀ ՈՒԽ կառավարման մարմիններն են հանդիսանում ԵՀ ՈՒԽ նախագահությունը և նախագահը, որոնք ընտրվում են 2 տարի ժամկետով:

5.5. ԵՀ ՈՒԽ նախագահության կազմի մեջ ի պաշտոնե մտնում են ԵՀ ՈՒԽ նախագահը, փոխնախագահները, ՖՈՒԽ-ների նախագահները, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների նախագահները:

5.6. ԵՀ ՈՒԽ նախագահությունը.

ա) որոշումներ է կայացնում ՈւԽ կանոնադրության ընդունման և անհրաժեշտության դեպքում Կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին, որոնք գործողության մեջ են դրվում ԵՀ գիտական խորհրդում հաստատելուց հետո,

բ) ընտրում է ՈՒԽ նախագահ,

գ) հաստատում է ՈւԽ-ի գործունեության տարեկան աշխատանքային պլանը,

դ) լսում և քննարկում է ՈւԽ նախագահի, ՖՈՒԽ-երի, հանձնաժողովների հաշվետվությունները,

ե) որոշում է ՈւԽ-ի լուծարման և վերակազմակերպման հարցերը,

զ) նիստեր է հրավիրում առնվազն ամիսը 1 անգամ: Արտահերթ նիստեր կարող են հրավիրվել նախագահի, ՖՈՒԽ-ների նախագահների, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների նախագահների առաջարկությամբ,

5.3 The general work of the Student Council is managed by the President of the SC, who is elected to that position by the Presidency of the EU SC.

5.4 The governing bodies of the EU SC are the Presidency of the EU SC and the President, who are elected for a 2-year term.

5.5 The President of the EU SC, vice-presidents, presidents of the FSC, presidents of permanent and temporary commissions are part of the presidency of the EU SC.

5.6 Presidency of the EU SC.

a) makes decisions on adoption of the Charter of the SC and, if necessary, making amendments and additions to the Charter, which are put into effect after approval by the Scientific Council of the EU,

b) elects the chairperson of the SC,

c)approves the annual work plan of the SC,

d) listens and discusses the reports of the Chairperson of the SC, the FSCs, the commissions,

e) decides the issues of liquidation and reorganization of the SC,

f) convenes meetings at least once a month. Extraordinary meetings can be called upon the recommendation of the president, the chairmen of the FSCs, the chairmen of permanent and temporary commissions,

g) The Presidency has the power to take decisions if more than half of its members are present. The decision is considered adopted if more than half of those present voted for it,

h) develops the programs of the EU SC and

է) Նախագահությունը իրավազոր է որոշումներ ընդունել, եթե ներկա են նրա անդամների կեսից ավելին: Որոշումը համարվում է ընդունված, եթե նրան կողմ են քվեարկել ներկաների կեսից ավելին,
ը) մշակում է ԵՀ ՈՒԽ ծրագրերը և ի կատար է ածում դրանք,
թ) ձևավորում և լուծարում է մշտական ու ժամանակավոր հանձնաժողովները, նշանակում է դրանց նախագահներին,
ժ) հաստատում է հանձնաժողովների կազմը,
ի) լսում և գնահատում է ԵՀ ՖՈՒԽ-ների, հանձնաժողովների ընթացիկ աշխատանքները,
լ) հաստատում է ԵՀ ՖՈՒԽ-ների կիսամյակային ու տարեկան ծրագրերը:

implements them,
i) forms and dissolves permanent and temporary commissions, appoints their presidents,
j) approves the composition of the commissions,
i) listens and evaluates the current work of the EU FSCs, commissions,
l) approves the semi-annual and annual programs of the EU FSCs.

5.7. ԵՀ ՈՒԽ նախագահը.
ա) ընտրվում է 2 տարի ժամկետով,
բ) ղեկավարում է ՈՒԽ-ն և իրականացնում է դրա առօրյա աշխատանքները,
գ) գլխավորում է ՈՒԽ նախագահությունը, հրավիրում է նախագահության նիստեր,
դ) ներկայացնում է ՈւԽ-ն արտերկրում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվական միջոցներում,
ե) ՈւԽ-ի անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր, որոնց մասին տեղեկացնում է ՈւԽ-ի նախագահությանը,
զ) Տալիս է լիազորագրեր ՈւԽ-ի անունից,
է) Նախագահության նիստում ձայների հավասար բաշխման դեպքում ունի վճռական ձայնի իրավունք,
ը) նախագահության անդամներից

5.7 The President of the EU SC:
a) is elected for a period of 2 years,
b) manages the SC and carries out its daily activities,
c) heads the presidency of the SC, convenes meetings of the presidency,
d) represents the SC abroad in state and local self-government bodies, public organizations, mass media,
e) signs contracts and agreements on behalf of the SC, about which he informs the Presidency of the SC,
g) In case of equal distribution of votes at the Presidency session, has the right to cast a vote,
h) vice president(s), secretary are appointed from the members of the presidency,
i) submits a report on its activities to the Scientific Council of the EC and the Rector.

նշանակվում է փոխնախագահ(ներ), քարտուղար,
թ) իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ԵՀ գիտխորհրդին և ռեկտորին:

| | |
|---|---|
| 5.8. ԵՀ ՈՒԽ նախագահի բացակայության ժամանակ նախագահի պարտականությունները կատարում է փոխնախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում նախագահության անդամներից մեկը նախագահի հանձնարարությամբ: | 5.8 In the absence of the President of EU SC, the duties of the President are performed by the Vice-President, and in the latter's absence, one of the members of the Presidium performs the President's duties. |
| 5.9. ԵՀ ՈՒԽ փոխնախագահները.<br>ա) մասնակցում են ՈՒԽ-ի աշխատանքների ղեկավարմանը,<br>բ) կոորդինացնում են ֆակուլտետների ՈՒԽ-ների, հանձնաժողովների աշխատանքները,<br>գ) հետևում են ՈՒԽ-ի ընդունած որոշումների կատարմանը,<br>դ) կատարում են ՈՒԽ-ի նախագահի հանձնարարականները: | 5.9The vice presidents of the EU SC:<br>a) participate in the management of the SC's work,<br>b) coordinate the work of the faculties' SCs, committees,<br>c) follow the implementation of decisions adopted by the SC,<br>d) carry out the instructions of the Chairperson of the SC. |
| 5.10. ԵՀ ՈՒԽ քարտուղարը հրավիրում է ՈՒԽ-ի նիստերը, կազմում արձանագրությունները, կատարում կազմակերպչական աշխատանքներ: | 5.10 The secretary of the EU SC convenes the sessions of the SC, draws up the protocols, performs organizational work. |
| 5.11. ՈՒԽ-ի գործունեության ընթացքում կարող է տեղի ունենալ խորհրդի անդամների մասնակի փոփոխություն՝ անդամների շրջանավարտների և ուսանողների նոր հոսքի ընդունելության հետ կապված: | 5.11 During the activity of the SC, a partial change of the members of the council may take place in connection with the admission of a new flow of alumni and students. |
| 5.12. ԵՀ ՈՒԽ իր գործունեության հիմնական ուղղությունների իրականացման համար ձևավորում է հետևյալ հանձնաժողովները՝ կրթական, գիտական, մշակութային, մարզական, արտաքին կապերի, տեղեկատվական և այլն: | 5.12 In order to implement the main directions of its activities, the EU SC forms the following commissions: educational, scientific, cultural, sports, foreign relations, information, etc. |
| 5.13. ԵՀ ՈՒԽ հանձնաժողովների նախագահները՝<br>ա) իրականացնում են կոնկրետ ոլորտների հանձնաժողովների ղեկավարումը,<br>բ) իրենց ղեկավարած հանձնաժողովների կազմը լրացնելու համար նախագահության | 5.13The presidents of the commissions of the EU SC:<br>a) carry out the management of commissions of specific fields,<br>b) submit relevant candidates for the approval of the presidency to fill the composition of the committees they lead,<br>c) make the current plans of the commissions |

հաստատմանն են ներկայացնում համապատասխան թեկնածուներ,
գ) ընթացիկ ժամանակահատվածի համար կազմում են հանձնաժողովների ընթացիկ պլանները,
դ) ԵՀ ՈՒԽ նախագահության հանձնարարությամբ կարող են ներկայացնել ՈՒԽ պետական և վարչական մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում,
ե) հաշվետվության են ներկայացնում հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ ԵՀ ՈՒԽ նախագահությանը:

for the current period,
d) may represent the SC in state and administrative bodies, non-governmental organizations, and mass media on the instructions of the EU SC chairpersonship,
e) report on the work of the commissions to the Presidency of the EU SC.

5.14. ԵՀ ՈՒԽ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ:

5.14 The competences of the structural divisions of the EU SC are defined by this charter.

## 6. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

## 6. GOVERNING BODIES AND STRUCTURAL SUBDIVISIONS OF THE FACULTY OF THE STUDENT COUNCIL

6.1. Ֆակուլտետների ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՖՈՒԽ) գործում է սույն կանոնադրությամբ:
- ՖՈՒԽ ձևավորվում է ֆակուլտետների ուսանողներից ընտրովի ներկայացուցչական սկզբունքով:
- ՖՈՒԽ-երի նախագահների ընտրությունները կազմակերպում է ՈՒԽ նախագահությունը:
- ՖՈՒԽ իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

6.1 Faculties of the Student Council (hereinafter referred to as FSC) operates according to this charter.
• FSC is formed from the students of the faculties on the principle of selective representation.
• Elections of the presidents of the FSC are organized by the Presidency of the SC.
• The FCS conducts its activities through meetings.

6.2. Ֆակուլտետի Ուսանողական Խորհուրդը՝
- Ընտրում է ՖՈՒԽ նախագահ,

The Student Council of the Faculty:
• Elects the chairperson of the FSC.
• Can have clubs based on the needs and

| | |
|---|---|
| • Կարող է ունենալ ակումբներ՝ ելնելով ֆակուլտետի ուսանողների կարիքներից և մասնագիտական ուղղվածություններից,<br>• Ներկայացնում է ուսանողների թեկնածություններ՝ ֆակուլտետի խորհրդի կազմում ներառելու համար: | professional orientations of the students of the faculty.<br>• Submits student nominations for inclusion on the faculty council. |
| 6.3. Սույն կանոնադրության համաձայն՝ ՖՈՒԽ նախագահը ընտրվում է 2 տարի ժամկետով: | 6.3 In accordance with this charter, the chairperson of the FSC is elected for a period of 2 years. |
| 6.4. ՖՈՒԽ նախագահը.<br>ա) ձևավորում և ղեկավարում է ՖՈՒԽ-ը,<br>բ) ապահովում է ՖՈՒԽ որոշումների ու ծրագրերի կատարումը,<br>գ) կազմում է ՖՈՒԽ-ի աշխատանքային պլանը,<br>դ) յուրաքանչյուր ուստարվա ավարտին կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ԵՀ ՈՒԽ նախագահությանը: | 6.4The chairperson of the FSC:<br>a) forms and manages the FSC,<br>b) ensures the implementation of decisions and plans of the FSC,<br>c) prepares the work plan of the FSC,<br>d) submits a report on the work done at the end of each year to the Presidency of the EU SC. |
| 6.5. ՖՈՒԽ անդամների լիազորությունները դադարեցվում են ՖՈՒԽ նախագահի ներկայացմամբ՝ ԵՀ ՈՒԽ նախագահության որոշմամբ: | 6.5The powers of the FSC members are terminated by the presentation of the FSC president by the decision of the EU SC presidency. |
| 6.6. ՖՈՒԽ նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ՖՈՒԽ անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: | 6.6The FSC meeting is valid if more than half of the FSC members participate in it. Decisions are made by a simple majority of the votes of those present. |

## 7. ԵՀ ՈՒԽ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## 7. THE ORGANIZATION OF THE ELECTIONS OF THE EU SC

| | |
|---|---|
| 7.1. ԵՀ ՈՒԽ և ՖՈՒԽ նախագահների ընտրությունները կազմակերպում է ԵՀ ՈՒԽ ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ընտրական հանձնաժողով): | 7.1 Elections of the presidents of the EU SC and the FSC are organized by the electoral commission of the EU SC (hereinafter, the electoral commission). |
| 7.2. Ընտրական հանձնաժողովի անդամները 3-ն են, որոնցից 2-ը ներկայացվում են ԵՀ ՈՒԽ նախագահության, 1-ը ԵՀ ռեկտորատի կողմից: | 7.2There are 3 members of the Electoral Commission, 2 of them are represented by the EU SC, 1 by the Rectorate of the EU. |
| 7.3. Ընտրական հանձնաժողովը.<br>ա) կազմակերպում է ընտրությունները, | 7.3The Electoral Commission:<br>a) organizes the elections, |

| | |
|---|---|
| բ) ամփոփում, արձանագրում և հաստատում է ընտրությունների արդյունքները,<br>գ) մեկօրյա ժամկետում քննարկում է ներկայացված բողոքները,<br>դ) կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրությունների անվավեր ճանաչելու մասին: | b) summarizes, records and confirms the election results,<br>c) considers submitted complaints within one day,<br>d) makes a decision to declare elections invalid in case of regulatory violations. |

## 8. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## 8. ORGANIZING THE FACULTY'S STUDENT COUNCIL ELECTIONS

8.1. ՖՈՒԽ-ի նախագահը ընտրվում է երկու տարի ժամկետով:

8.1 The chairperson of the FSC is elected for a two-year term.

8.2. ՖՈՒԽ նախագահի ընտրությունը համարվում է վավեր, եթե ներկա են ֆակուլտետի ուսանողների կեսից ավելին:

8.2 The election of the president of the FSC is considered valid if more than half of the faculty's students are present.

8.3. ՖՈՒԽ նախագահը ընտրվում է փակ, գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

8.3 The chairperson of the FSC is elected by a closed, secret ballot, with a simple majority of votes.

8.4. Ընտրությունների արդյունքում ՖՈՒԽ նախագահը ձևավորում է ՖՈՒԽ-ը, որի անդամների թիվը պայմանավորված է ֆակուլտետի ուսանողների թվով՝ մինչև 50 ուսանողից մեկ ներկայացուցիչ:

8.4 As a result of the elections, the president of the FSC forms the FSC, the number of members of which is determined by the number of students of the faculty, up to one representative per 50 students.

## 9. ԵՀ ՈՒԽ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## ORGANIZATION OF THE ELECTION OF THE CHAIRPERSON OF THE EU SC

9.1. ԵՀ ՈՒԽ նախագահը ընտրվում է ԵՀ ՈՒԽ նախագահության կողմից՝ 2 տարի ժամկետով:

9.1The President of the EU SC is elected by the Presidency of the EU SC for a period of 2 years.

9.2. ԵՀ ՈՒԽ նախագահի թեկնածությունը առաջադրվում է նախագահության անդամների կողմից կամ ՈՒԽ կազմից՝ ինքնաառաջադրմամբ:

9.2 The candidacy of the president of EU SC is nominated by the members of the presidency or from the members of the SC by self-nomination.

9.3. ԵՀ ՈՒԽ նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

9.3 The election of the President of EU SC is carried out by a closed, secret vote, with a simple majority of votes.

9.4. Անհրաժեշտ քվեներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ

9.4 If the necessary votes are not collected, the two candidates with the maximum number of

հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:

votes go to the second round. In the second round, the candidate with the most votes is considered elected.

9.5. Նախագահի տեղակալի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե այն մասին այլ որոշում նախագահությունը չի կայացնում:

9.5 The election of the chairperson, the responsible secretary, the chairpersons of the commissions is done by open voting, if the presidency does not decide otherwise.

## 10. ԵՀ ՈՒԽ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

## 10. FINANCIAL MEANS OF THE EU SC

10.1. ԵՀ ՈՒԽ-ն անվճար օգտվում է ԵՀ տարածքային, գույքային միջոցներից և նյութատեխնիկական բազայից և այլն:

10.1 The EU SC makes use of the EU's territorial, property resources and material and technical base, etc., free of charge.

10.2. ԵՀ ՈՒԽ ֆինանսական միջոցները գոյանում են ԵՀ բյուջեից կատարվող տարեկան մասհանումից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, հանգանակություններից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՀ կանոնադրությամբ չարգելվող այլ գործունեությունից:

10.2 The financial resources of the EU SC are generated from annual deductions from the EU budget, grants, donations, collections, as well as from other activities not prohibited by the legislation of the Republic of Armenia and the Statute of the EU.

10.3. ԵՀ ՈՒԽ նյութական և ֆինանսական միջոցները տնօրինում են ԵՀ ՈՒԽ նախագահության կողմից: Ֆինանսական ծախսերը իրականացվում են ՈՒԽ-ի նախագահության որոշմամբ, որոնց մասին ՈՒԽ-ի նախագահը հաշվետվություն է ներկայացնում ԵՀ ՈՒԽ-ին և ԵՀ Գիտական խորհրդին:

10.3 The material and financial resources of the EU SC are managed by the presidency of the EU SC. The financial expenses are carried out by the decision of the SC presidency, about which the SC president submits a report to the EU SC and the Scientific Council of the EU.

## 11. ԵՀ ՈՒԽ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## 11. THE ORDER ON MAKING CHANGES AND ADDITIONS IN THE CHARTER OF THE EU SC

11.1. ԵՀ ՌԻԽ Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություն կարող են անել՝ ԵՀ ՌԻԽ նախագահը, ԵՀ ՌԻԽ նախագահությունը:

11.1 The President of the EU SC, the Presidency of the EU SC can propose changes and additions to the Charter of the EU SC.

11.2. ԵՀ ՌԻԽ Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններն ու լրացումները վավերացվում են Եվրոպական համալսարանի Գիտական խորհրդում հաստատվելուց հետո:

11.2 Corresponding amendments and additions to the Charter of the EU SC are ratified after being approved by the Scientific Council of the European University.